

## ՀԻՆ ԹՈՒՒՂԹԵՐ

### I

Հ. Յ. Դ. կենտր. Դիւանի քղքերում կայ մի գրութիւն, ուր անձանք հեղինակը 1920 թ. յունւարին, գրի է առել մի շարք տեղեկութիւններ ու կարծիքներ Արտէն Թախմախեանի մասին: Երեւում է, որ հեղինակը մօտից նամակ է թախմախեանին, այդ պատճառով նրա գրածները զուրկ չեն հետաքրքրութիւնից: Այստեղ տալիս եմ այդ գրութեան էական մասերը:

« Արտէն Թախմախեանը, աւագ է այնտեղ, հայաստանցի էր, վանեցի. քաջ ծանօթ էր իր երկրի կարգ ու կանոնների, շատ լաւ գիտէր Տաճկահայաստանի աշխարհագրութիւնը եւ մեր պատմութիւնը: Նա տաճկահայ գեղջուկին այնպէս լաւ էր նկարագրում, որ կարծում էիր թէ իսկական պատկերն էս տեսնում: Յաղթանդամ էր կազմաւորով, աղղու՝ ձայնով, անկեղծ՝ խօսքով, դէմքի վրա միշտ փայլում էր վառվռուն ժպտը: Այնքան պարզ ու հասարակ էր բնութիւնով, որ չսիրել նրան անկարելի էր: Վերին աստիճանի ներողամիտ էր ու համբերող: Երեք — չորս ամսով մի սենեակում ապրել ենք, տասնեակ տարի ամենամօտիկ յարաբերութիւն ունէինք հետը եւ ոչ մի անգամ նրան բարկացած չենք տեսել: Բայց որքան հեզ ու համբերող էր սովորական, առօրեայ բաներում, նոյնքան անընկճելի էր գաղափարի մէջ:

Մօտաւորապէս 30 — 32 տարի սրանից առաջ նա ուսուցչութեամբ էր պարապում Լազոդեխի հայոց դպրոցում: Այն ժամանակները հայկական աշխարհում ամենապաշտելին Խրիմեան Հայրիկն էր: Թախմախեանը թողնելով ուսուցչութիւնը՝ դնաց իր հայրենիքը: Յայտնեց Խրիմեանին իր պատրաստակամութիւնը: Խրիմեանը խորհուրդ էր տւել տաճկահայերի լացն ու կոծը հասցնելու ռուսահայ եղբայրների ականջին: Հետեւելով Հայրիկի հրահանգներին՝ Արտէնը, քանի որ վարդապետ չէր ձեռնադրւել, ուսումնասիրում էր անձամբ տեղն ու տեղը, տաճկահայերի դարան ու ցաւը, եւ անցնելով ռուսահայոց սահմանը, շատ անգամ ծպտեալ կերպով (հսկողութեան

տակ էր), շրջում էր քաղաքից քաղաք, գիւղից գիւղ, տարածում էր ամէն տեղ տաճկական լծի տակ հեծող հայ ժողովրդի տառապանքների նորագոյն լուրերը: Վառում — կրակում էր լսողների սիրտը իր ազգասիրական կրակով: Եւ դարձեալ վերադառնում նոյն սիրած ժողովրդի հայրենիքը՝ աւելի նոր տեղեութիւններ բերելու:

Նա Եւրոպայից չէր գալիս՝ պատւաստելու մեզ վրա Եւրոպայի գաղափարները: Ռուսաստանից չէր գալիս՝ տարածելու ռուսական սոցիալիզմը: Նա գալիս էր Հայաստանից, հայ գեղջուկի մօտից՝ կայցնելու մեր սրտերը նրանց սրտերին, յայտնելու մեր եղբայրների տառապանքները: Նա կենդանի հայ թերթ էր, օրագիր, որ իր աներկիւղ եւ համողած քարոզներով ցոյց էր տալիս մեր յեղափոխութեան իսկական եւ ամենակարճ ճանապարհը՝ զնալ, մտնել ամէն հայի մօտ աներկիւղ, բախել նրանց քարացած սրտի դռները սեփական բռնունջներով. պատկերացնել ամէն մի ազնիւ հայի անելիքը կենդանի լեզուով, վառել արձագանգ տուող երիտասարդութեան մաքուր ձրտումները եւ տանել մեր կերտիչներին թովիչ Ազատութեան սուրբ պատերազմի սիրուն դաշտը...

Նա ազգում էր շատերի վրա: Երիտասարդներից մի քանիսին նա իր հետ տարաւ Հայաստան. շատերը դրանցից կենդանի են: Մեռածներից ես յիշում եմ Հայկ Մելիք — Դադայեանին, Վաղարշակ Վարդանեանին: Բժկ. Բ. Նեանը \*) Թոխմախեանի աղգեցութեամբ եւ սոաջնորդութեամբ ճանապարհորդութիւն կատարեց Հայաստանի մի ծայրից միւսը: Բաֆֆուն՝ Խենթի ու Կալծերի միտքը տւեց Թոխմախեանը: Գր. Արծրունու նման զօրեղ բնաւորութիւնը շատ անգամ խոնարհում էր Արսէնի անկեղծ հայեացքների առաջին: Մինչեւ անգամ մեր կղերկանութեան հոտած վայրը՝ Էջմիածնայ միաբանութիւնը, նա էլ ունէր համակրողներ Թոխմախեանին:

Արսէնը մի անդուգական հայ գործիչ էր իր ժամանակին. անվախ գործող, համողած յեղափոխական, լայնահայեացք ազգասէր: Նա առաջինն էր մեր հայերից, որ ամէն բան թողած՝ աշխարհական քարոզչի գաւազանը ձեռքն առած՝ ամէն տեղ քարոզում էր Ազատութեան սուրբ խօսքը բազմաչարչար հայ աղբի համար:

Առաջին անգամ Թոխմախեանին տեսել եմ Երեւանում 1875 թւին: Նա հաւաքել էր ծխախոտագործ Ղուրբանով Գրիգորի տանը մի քանի երիտասարդներ եւ բոլոր համոզմունքով քարոզում էր: Սարսափելի գոյներով սլափում էր տաճկահայերի կրած տանջանքները,

\*) Բժ. Բագրատ Նաւասարդեան: ԽՄԲ.

քայքայված տնտեսությունը, ամենաարդար իրաւունքների արդելումը, կոյս աղջկերանց ու երիտասարդ հարսների բռնաբարումը: Պատմելով տաճկական անդթուլթիւնների բոլոր զղեւի տեսակները՝ նա բացազանչում էր. «Հաւատացէ՛ք ինձ, որ քաջ ծանօթ եմ իրերին, որ մենք կարող ենք փրկւել, եթէ մեր յոյսը դնենք մենակ մեզ վրա. հարկաւոր են միայն համոզւած գործիչներ եւ մի ազատ ապաստարան: Գործիչներ ունենք, եղբայր, շատ ունենք. ես եմ շրջում ամէն տեղ, ես էլ գիտեմ: Դուք ինձ տւեցէ՛ք միայն մի ապաստարան, ուր կարողանանք կենտրոնացնել մեր ցիր ու ցան ուժերը»:

Եւ նա առաջարկում էր գնել պարսիկներից Մակուայ խանութիւնն եւ դարձնել հայ յեղափոխականների օջաղ: «Հաւատացէ՛ք, եղբայրներ, — գոռում էր նա հռետորի նման, — մենք այն ժամանակ մեր օջաղի կրակով մոխիր կը դարձնենք վախկոտ տաճիկներին եւ ծխովը խեղդամահ կանենք թոյլ պարսիկներին: Գնեցէ՛ք Մակուայ խանութիւնը, — գործողներ ունենք, ես հաւաքեմ բոլորին այնտեղ»: Կրկնում էր շուտ — շուտ՝ «Մակուայ խանութիւնը, Մակուայ խանութիւնը»:

Այս նպատակայարմար միտքը, որ քարոզում էր Թոխմախեանը 26 — 27 տարի սրանից առաջ, մի՞թէ նոյն արժէքը չունի եւ այժմ, երբ մեր յեղափոխական շարժումը ահագին քայլեր է արել արդէն, իսկ մեր ամենալաւ յեղափոխականները ստիպւած են թափառելու շատ հեռւոր տեղերում:

Այս հարցը անցեալ դարու 70-ական եւ 80-ական թւականներում շատ էր զբաղեցնում մեր յեղափոխական ընկերութիւններին: Շատ էլ միջոցների է գիմելել: Սակայն, մեր կրեսոսները մեռած են մեզ համար:

Բայց հեռացայ Թոխմախեանից:

Նա՝ սկսած 1880 թւականից գործում էր հայ յեղափոխական անդրանիկ ընկերութեան «Կեդրոնական Կոմիտէի» անդամների հետ միասին: Այդ Կոմիտէն կազմակերպւել է 1879 թւականին, Թիֆլիսում, 3 հոգուց բաղկացած: \*) Յետոյ, 1881 թւին, ընկերների թիւը հասաւ 9 հոգու: Նա 1880 թւականին հրատարակեց անդրանիկ հայ յեղափոխական տպագիր թերթիկը՝ «Թռուցիկ թերթ» վերնագրով: Մի տարուց յետոյ նա միացաւ Մոսկուայի նորակազմ միւս յեղափոխական ընկերութեան հետ՝ Հայրենասէրների Միութիւն անունը ըն-

\*) Թումս է քէ սա այն կոմիտէն է, որի մասին յիշում է Քրիստափոր Միքայելեանը:

դռնելով: Գործունէութեան կենրոնն անցաւ Մոսկւա եւ այնտեղ էլ հրատարակուեալ էր այժմեան Դրօշակի դիրքով մի երկրորդ յեղափոխական թերթը «Ազատութեան Աւետարներ» անունով եւ թեք խաչածեւ սուր ու հրացանի դրօշով: Մեր պատմութեան այս վերին աստիճանի հետաքրքրական էջերը արձանագրելու մեծ կարիք կայ: ... Թոխմախեանը մարմնացեալ զաղափար էր: Եթէ մեր երկասարդ բանաստեղծ Քրիստափոր Թաղէոսեանը, չափ տարիներից յետոյ, 1890-ի վերջերում, բանաստեղծական հիւսկածքով երգում էր միայն կտրիչի խօսքերը, թէ՛

Ես չեմ ցաւում իմ ջախել կեանքը,  
 Ձեմ ցաւում նոյնպէս իմ ծնողներին,  
 Ձեմ ցաւում նոյն իսկ իմ սիրականին,  
 Բայց ցաւում եմ միայն, որ չեմ կարող էլ  
 Ձեզ հետ միասին կուել, կոտորել,  
 Եւ ստրկութեան լուծն անվայել  
 Ձեզ հետ միասին ջարդել – ջախջախել:

Եթէ, ասում եմ, բանաստեղծը այս քաղցր ցաւերը երգում էր 1890 թւականին, Թոխմախեանը դեռ տասը տարի առաջ անձամբ էր վայելում, իր սրտի մէջ, այդ ցաւերի բոլոր քաղցրութիւնը:

Նրա մինուէար որդին սովորում էր Թիֆլիսի Ներսիսեան դըպրոցում: Հայրն էլ ամիսներով Թիֆլիսում հալ ու մաշ էր լինում որդու տեսութեան կարօտից: Եւ արտասուքը աչքերին աղաչում էր՝ «Ի սէր զաղափարի, մի՛ ասէք տղայիս, որ ես այստեղ եմ»:

«Ստրկութեան անվայել լծի ջախջախման» զաղափարն էր այնքան վերացրել Թոխմախեանին, որ նա «չէր ցաւում նոյն իսկ իր» մինուէար սիրական որդուն: Եւ նրա ծնողական սիրտը սաստիկ էր փափաքում որդու տեսութեանը: Նա դարձեալ չէր ուզում որդուն տեսնել: Նա համոզւած էր, որ որդու հայեացքից կարող է թուլանալ զաղափարի ոյժը: Ծնողական սէրը հասնում էր իր գաղաթնակէտին... Արսէնը հաւաքում էր իր բոլոր ուժերը: Հուժկու ձայնով երգում էր իր սիրած երգը՝ «Ձայնը հնչեց էրգրումի հայոց լեռներէն»՝ Սիրտն աւելի էր բարախում. նա վռագ կանչւածի պէս յանկարծ ժամացոյցին էր նայում ու դուրս գալիս սենեակից: Ո՞ւր էր գնում: Գաղտնի կերպով հետեւում էինք նրան եւ ի՞նչ սրտաշարժ տեսարան դիտում: Սիրող ծնողի բոլոր ուժով նա որոնում էր իր միակ որդու սուերն այն փողոցում, որով, կարծում էր թէ որդին գնացած կը լինի դպրոցից դէպի տուն: Օրը ցերեկով, քարած փողոցում սալայատակ մայթերի վրա նա որոնում էր իր սիրելի որդու

ոտատեղերը: Եւ կշտանում էր դրանով: Տուն էր վերադառնում մարմնացեալ գաղափար դարձած: Հրդեհում էր նա մեղ այդ բոպէսներին իր վեհութեամբ: Մենք մոռանում էինք նրա ներկայութեամբ ամէն ինչ, բացի հայի ազատութիւնից:

Եւ այսպիսի մի գաղափարական զուէ դառնում սեւահողի մարդկանց ստոր մատնութեան: Նա նահատակեց \*) բայց նրա պաշտած գաղափարները, ինչպէս տեսնում ենք, կենդանի են մինչեւ օրս էլ»:

## II

### ԵՓՐԵՄԻ ԴԻԻԱՆԻ ԹՂԹԵՐԻՑ

Եփրեմի դիւանի մի մասը փոխանցւած է Հ. Յ. Դ. Կեմտր. Դիւանին: Պարսկաստանի յեղափոխական շարժման վերաբերող բաւական կարեւոր նիւթեր կան նրա մէջ: Այստեղ առաջ եմք բերում Ռոստամի երկու նամակը՝ Եփրեմին Է. Յ. Միրզայեանցին, գլխաւորապէս որպէս պատմական վաւերագիր, որ արժէքաւոր է Ռոստամի կենսագրութեան համար: Նամակը գրւած է Եփրեմի առաջին շրջանի յաղթութիւններից Է. Թէհրանի ոստիկանապետ նշանակելուց յետոյ: Ռոստամը, Պարսկաստանից հեռանալով, գտնւում էր Պոլսում:

ԽՄԲ.

### ՌՈՍՏՈՄԻ ՆԱՄԱԿԸ ԵՓՐԵՄԻՆ

Սիրելի Եփրեմ,

Բոլոր այստեղի ընկերների կողմից սրտանց շնորհաւորում ենք քո քաջութիւնները: Միայն թէ անյարմար պաշտօն է քեզ վիճակել: Լաւ կը լինի, եթէ յեղափոխական խառը դրութիւնը անցնելու լինի եւ քիչ թէ շատ խաղաղ կեանք ստեղծւելու լինի, հրաժարական տաս ոստիկանապետի պաշտօնից:

Արդէն քեզ դիմած կը լինեն մանրամասը տեղեկագրի համար: Եթէ չես ուղարկել, պատրաստիր կամ պատրաստել տուր շատ շուտով եւ անպատճառ ուղարկիր Պոլիս Ազատամարտի հասցէով ինձ յանձնելու համար: Տեղեկագիրը կսկսես շարժման առաջին օրերից:

Եթէ ժամանակ չունենաս դէպքերը մանրամասը նկարագրելու,

\*) Ինչպէս յայտնի է, Ա. Թոխմախեանը սպանեց Պարսկաստանի Դերիկի վանքում ինչ որ մութ կասկածներով: Ենթադրւում է, որ սպանիչը Յունոմ էր, որ սպանելուց յետոյ այրել էր նրա դիակը: ԽՄԲ.

յիշատակիր գոնէ գլխաւոր դէպքերը, ժամանակագրական շարքով:

Տեղեկագիրը պէտք է լինի ընդհանուր շարժման մասին եւ մասնաւորապէս Դաշնակցութեան դերի մասին ձեռք չընշմուշ:

Մտադիրն ողջոյններ բոլոր ընկերներէ կողմից: Մասնաւորապէս Մուրատի եւ Արամի:

Համբոյրներս այդտեղի ծանօթ եւ անծանօթ ընկերներին:

26 յուլիս, 1909

Քո Ռոստոմ

## ՌՈՍՏՈՄԻ ՆԱՄԱԿԸ ՅՈՎՍ. ՄԻՐԶԱՅԵԱՆՅԻՆ

26 յուլիս, 1909.

### Սիրելի Յովսէփ.

Նախ եւ առաջ թարգմանութեանդ մասին, որ մնացել էր Յովհաննէս Թումանեանցի մօտ: Հիմա նա ազատ է, եւ դու կարող ես գրել նրան, որ յանձնի քո ուղած մարդուն:

Քո եւ բժշկի \*) ընդարձակ գրութիւններին բաւական ժամանակ պատրաստուած էի պատասխանել, բայց, ինչպէս գիտես, դա արտակարգ դժուար բան էր ինձ համար. մանաւանդ այն ժամանակաւ պայմաններում: Հիմա ուրախութեամբ եմ գրիչս ձեռք առնում, — պարսկական շարժման վերջարանը աւելորդ է դարձնում որ եւ է արդարացում մեր կողմից:

Յուսով եմ, որ թէ դուն եւ թէ բժիշկը աւելի լաւատես դառած կը լինէք, եւ մոռացութեան տալով միջին շրջանը, հպարտութեամբ կը յիշէք եւ կը յիշեցնէք այն երանելի օրերը, երբ դուք էիք հայհոյում Վրէժին նրա պահպանողականութեան, «խոհեմութեան» համար:

Բժիշկը ստացած կը լինի Թաւրիզից ուղարկած մեր շնորհաւորութիւնները: Շատ կուղենայի մի այդպիսի շնորհաւորութիւն էլ քեզ ուղարկել. սպասում եմ:

Բժշկին ասա, որ ամէն օր նրան յիշում եմ. նոյն իսկ մի քանի անգամ օրը անհրաժեշտաբար: Երբ կերակուր ուտելիս, մսի թելերը բռնում են ատամներին խոռոչները, եւ լեզուի ծայրը շարունակ պրպտում է այդ խոռոչները, երբ թթւից կամ տաքից բռնում է ատամիս ցաւը, յիշում եմ, որ մի ժամանակ բժիշկը այնտեղ պլօմբ էր խոթում, ապահովացնելով ինձ երկար ժամանակով:

Մահմէդ Ալին էլ այդպիսի յիշողութիւններով հեռացած չլինի՞ բժշկից...

Քո Ռոստոմ.

\*) Խօսքը ատամնաբայժ Դր. Յ. Ստեփանեանի մասին է: